«ՀԱՅԼՈՒՐ»ԻՆ ՏՈՒԱԾ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՈՎ

ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵԻ ԽԵԼԱՄՏՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ինչպէս ծանօթ է, վերջերս Մոսկուա կը գտնուէր Ատրբեջանի նախագահի պաշտօնակատար Հայտար Ալիեւ: Վերջերս իշխանութեան տիրացած Ալիեւ, որ կը մերժէր հարցազրոյց ունենալ համաշխարհային լրատու գործակալութիւններու եւ թերթերու թղթակիցներու հետ, զարմանալի պատրաստակամութեամբ արձագանգեց «Հայլուր»ի խնդրանքին եւ հանդիպում մը ունեցաւ Մոսկուայի մէջ անոր թղթակից Լուսին Ղուկասեանի հետ: Նշենք, որ ատրպէյճանական կողմի խնդրանքով, հարցազրոյցը տեսաներիզի վրայ արձանագրուեցաւ եւ մասնակի կրճատումներով ցուցադրուեցաւ Պաքուի հեռատեսիլէն:

«ԱՊԱՇՐՋԱՓԱԿՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

– Պրն. Ալիեւ, Մոսկուա կատարած ձեր այցելութեան ժամանակ դուք յայտարարեցիք Ատրպէյճանի ԱՊՀ մտնելու ցանկութեան մասին: Դառնալով նրա անդամը, ի՞նչ կը շահի եւ ի՞նչ կը կորցնի ձեր պետութիւնը:

– Ապագան ցոյց կու տայ: Բայց մենք նախապէս համոզուած ենք, որ դա դրական արդիւնք կ'ունենայ:

– Դուք չէ՞ք նեղուում այն հանգամանքից, որ Ատրպէյճանի հետ նոյն համագործակցութեան անդամ է լինելու մի երկիր, որի հետ, ինչպէս դուք էք պնդում, այն գտնուում է պատերազմի մէջ:

– Պետութիւնների համագործակցութիւնը հենց դրա համար էլ համագործակցութիւն է, որպէսզի դրա սահմաններում հնարաւոր լինի լուծել այն խնդիրները, որոնց լուծումն այդ սահմաններից դուրս անհնար է:

– Ի՞նչ էք կարծում, Ատրպէյճանի ԱՊՀ անդամ դառնալուց յետոյ հնարաւոր կը լինի՞ իրականացնել Հայաստանի եւ Նախիջեւանի ապաշրջափակումը:

– Ապաշրջափակումը հնարաւոր է եւ առանց դրան: Զեզ անկեղծ ասեմ, որ դա չցանկացաւ Հայաստանը: Ժամանակին (1992ի ամառը), երբ գտնուում էի Նախիջեւան, ես կանխատեսում էի, թէ ինչ դժուար ձմեռ է սպասւում եւ ամէն կերպ փորձում էի համոզել հասնել ճանապարհների ապաշրջափակմանը: Դրան հակադրւում էր Ատրպէյճանի այն ժամանակուայ էլիպէյական ղեկավարութիւնը. բայց յետոյ, ճնշում գործադրելով նրանց վրայ, ես յաջողեցի ստանալ ատրպէյճանական ղեկավարութեան համաձայնութիւնը: Դա արդէն ձմեռնամուտին էր: Սակայն հայկական կողմը չհամաձայնուեց, առաջարկելով ինձ բեռները Նախիջեւան հասցնել Թբիլիսիով եւ Երեւանով: Դա լրիւ անիրական տարբերակ էր: Նրանք, չգիտես ինչու վախենում էին բեռները թողնել Մեղրիի հատուածով, մտածելով, որ եթէ ճանապարհը գործի, ատրպէյճանական զօրքերը իբր կը կարողանան գրաւել Մեղրին: Զնայած ոչ նման վտանգ , ոչ էլ անհանգստանալու որեւէ հիմք չկար: Այն ժամանակ սահմանի վրայ անձամբ հանդիպել եւ բանակցութիւններ եմ վարել հայկական ղեկավարութեան հետ: Նրանք խոշոր սխալ թոյլ տուեցին: Չէ՞ որ ճանապարհների ապաշրջափակման իրական հնարաւորութիւն կար: Ես գտնում եմ, որ դա կը համապատասխանէր Ե՛ւ Հայաստանի Ե՛ւ Ատրպէյճանի շահերին:

– Իսկ ինչպիսի՞ն կը լինի Պաքու – Թուրքիա կազատատարի յետագայ ճակատագիրը:

– Այդ թէման չգիտես ինչու վերջին շրջանում շատ նոյթի է դարձել: Դեռ ոչինչ, բայց արդէն խօսւում է կազատարի մասին: Նախ պէտք է որոշել, թէ ինչպէ՞ս է արտահանուելու կազը, ո՞ւր եւ ինչպէ՞ս է ուղարկուելու եւ յետոյ նոր միայն մտածել կազատարի մասին: Ինչեւէ, ես գիտեմ, որ գոյութիւն ունի կազատարի 4 տարբերակ: Փորձագէտները զբաղւում են դրանով: Այդ տարբերակներից որն աւելի արդիւնաւէտ կը գտնուի (բոլոր տեսանկիւններից), դրան էլ կը տրուի նախապատուութիւնը:

«ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄՏԱՎԱԽՈՒԹԻՒՆԸ ԱՆՀԻՄՆ ՉԷ»

– Պրն. Ալիեւ, Թուրքիան որոշակիօրէն անհանգստացած է Ռուսաստանի հետ Ատրպէյճանի նոր մերձեցմամբ: Որքանո՞վ են իրական այդ մտահոգութիւնները:

– Իրական են:

– Չէ՞ք գտնում, որ Թուրքիայի հետ յարաբերութիւնների սառնութիւնը ձեզ համար ընտրողների ձայների արժէք կ'ունենայ նախագահական ընտրութիւնների ժամանակ:

– Թուրքիայի հետ մենք բարդութիւններ չունենք: Նա նոյնպէս ձգտում է բարելաւել յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Ռուսաստանի հետ առաւել սերտ յարաբերութիւններ հաստատելու նպատակով, Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերի ղեկաւարած պատուիրակութեան Մոսկուա այցը վկայում է, որ մենք գործում ենք նոյն ուղղութեամբ:

Իսկ ինչ վերաբերում է ձայներին... մի անհանգստացէք, ձայներ կը լինեն:

– Դուք ապաւինում էք ոչ – այլընտրանքայի՞ն ընտրութիւններին:

– Չէի ցանկանայ, որ ընտրութիւնները ոչ – այլընտրանքային լինէին: Կ'ուզէի, որ խորհրդարանը ցանկացող առաջադրէր իր թեկնածութիւնը: Գիտէք, մեզ մօտ, Ատրպէյճանում, նախագահ դառնալ ցանկացողները շատ են: Դրա համար պայքարել են, միմեանց դահլիճակից արել, բայց դուք վկայ էք, որ ես նստած էի Նախիջեւանում եւ ոչ միայն չէի պայքարում, բայց նաեւ որեւէ ձգտում չունէի... Բայց ընդհանուր առմամբ, քանի որ այսպէս է ստացուել, թող ցանկացած անձ առաջադրի իր թեկնածութիւնը:

– Իսկ դուք, Հայտար Ալիեւիչ, տեսնո՞ւմ էք իրական յայտակնորդներ:

– Հարցն այն չէ, թէ տեսնում եմ թէ ոչ: Շատերն իրենք են իրենց տեսնում... Այդ պատճառով ով ցանկանում է, թող առաջադրուի: Դա կարող են անել նրանք, ովքեր ապրում են Ատրպէյճանում եւ նրանք, ովքեր գտնուում են երկրի սահմաններից դուրս, ցանկացած ատրպէյճանցի: Դէ, ի հարկէ, Հայաստանից չի կարելի... (ծիծաղում է):

ԱՄԷՆ ԻՆՉ ՀՈՍՈՒՄ Է, ԱՄԷՆ ԻՆՉ ՓՈՓՈԽԻՈՒՄ...

– Պրն. Ալիեւ, ապագայում դուք հնարաւո՞ր էք համարում ատրպէյճանական պետութեան դաշնակցային կառոյցը, առաւել եւս, որ դաշնութեան հնարաւոր սուբիէկտներից մէկը՝ Նախիջեւանի հանրապետութիւնն, արդէն իսկ գոյութիւն ունի:

– Խնդիրն այն է, որ անկախութեան մասին հանրաքուէի արդիւնքներով ընդունուել է անկախութեան մասին սահմանադրական ակտ, որի համաձայն Ատրպէյճանը հանդիսանում է ունիտար պետութիւն եւ այն, ինչ հանդիսանում է համաժողովրդական հանրաքուէի արդիւնք, մէկ հոգի չի կարող փոխել... Ես հիմա չէի ցանկանայ խօսել այդ հարցի շուրջ:

– Դուք բազմիցս, ե՛ւ երբ գտնուում էիք Նախիջեւանում, ե՛ւ Պաքու վերադառնալուց յետոյ, ընդգծել էք ձեր հակուածութիւնը դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը: Այս տեսակէտից ինչպէ՞ս կը բացատրէիք Հասան Հասանովի նշանակումը արտգործնախարարի պաշտօնում, հաշուի առնելով վերջինիս չափազանց կոշտ դիրքորոշումը Ղարաբաղի նկատմամբ:

– Գիտէ՞ք ինչ, նախ քաղաքականութիւնը որոշում է ոչ թէ արտգործնախարարը, այլ պետութիւնը: Երկրորդ, չէ՞ որ անձերը տարբեր քաշ ունեն եւ երրորդ, ամէն ինչ հոսում է, ամէն ինչ փոխուում:

– Միջազգային մեխանիզմները, ցաւօք սրտի, անընդունակ դուրս եկան դարաբաղեան ճգնաժամի յաղթահարման խնդրում: Դուցէ աւելի արդիւնաւէտ կը գործեն ուղի՞ղ բանակցութիւնները Ատրպէյճանի եւ Ղարաբաղի միջեւ:

– Մենք պէտք է ամէն ինչ համադրենք՝ ե՛ւ ուղիղ բանակցութիւնները ե՛ւ ՄԱԿի ու ԵԱՀԿի գործունէութիւնը: Հարկաւոր է, որպէսզի միջազգային կազմակերպութիւնները մասնակցեն այս գործին: Անպայման: Եթէ մինչ այժմ հնարաւոր չի եղել դրական արդիւնքների հասնել, ուրեմն պէտք է մէկ անգամ էլ փորձել:

– Կը կայանա՞յ արդեօք ձեր հանդիպումը Կարէն Բաբուրեանի հետ:

– Նախեւառաջ կարծում եմ, որ մենք պէտք է հանդիպենք Լեւոն Տէր Պետրոսեանի հետ:

– Ե՞րբ կարող է կայանալ այդ հանդիպումը:

– Հենց որ հնարաւորութիւն ստեղծուի: Ես պատրաստ եմ նրան հանդիպել:

– Եւ այդտեղ՝ դուք հնարաւո՞ր էք համարում Արցախի ղեկավարութեան հետ բանակցութիւնները:

– Գիտէք, նախ հարկաւոր է հանդիպել Լեւոն Յակորեւիչի հետ: Ես նրան վաղուց ծանօթ եմ եւ ուզում եմ հանդիպել:

Հայաստանի ղեկավարութեան հետ մեր ուղղակի շփումները շատ մեծ նշանակութիւն ունեն: Այն պահից երբ ես սկսեցի կատարել Ատրպէյճանի ԳԽի նախագահի եւ ապա Ատրպէյճանի նախագահի պարտականութիւնները, մշտական կապի մէջ եմ ՀՀ ղեկավարութեան, անձամբ ՀՀ նախագահ պրն. Լեւոն Տէր Պետրոսեանի, ԳԽ նախագահի, պաշտօնատար այլ անձանց հետ: Ես դա անհրաժեշտ եմ համարում այս հարցի կարգաւորումը գտնելու համար:

«ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԸ ՄԷԿ ՕՐՈՒՄ ՉԵՆ ԼՈՒԾՒՈՒՄ»

– Չէի՞ք կարող աւելի որոշակի ասել, թէ ի՞նչ էք հասկանում «դարաբաղեան հարցի խաղաղ կարգաւորում» ասելով: Հնարաւո՞ր էք համարում ապագայում Ղարաբաղի, որպէս անկախ պետութեան գոյութիւնը:

– Բոլոր այդ հարցերը մէկ օրում չեն լուծւում: Դրանք պահանջում են աստիճանային, փուլային որոշում:

Նախեւառաջ հարկաւոր է անյապաղ դուրս բերել հայկական զօրքերը Ղարաբաղի շրջանից: Այդ առթիւ Ռ. Քոչարեանի յայտարարութիւնն առայժմ գործով ամրապնդուած չէ: Յայտարարուեց զօրքերը դուրս բերելու մասին, բայց դրանք առայժմ դուրս չեն բերուել:

Հարկաւոր է անյապաղ դուրս բերել զօրքերը Ֆիզուլիից, Ջեբրայիլից, Աղդամից: Յետոյ հարկաւոր է դուրս բերել բաղարից: Դէ, իսկ ինչ վերաբերում է Լաչինին, այստեղ ի կէ հարցեր կան: Բայց հարկաւոր է թերեւս դուրս բերել Լաչինի միջանցքից եւն. : Ես գտնում եմ, որ ձգձգել չի կ

– Ենթադրենք, որ վաղը դարաբաղեան ուժերը դ են գալիս ձեր նշած տարածքներից, իսկ յետո՞յ:

– Յետոյ մենք ձեր հետ կը տեսնենք (ծիծաղում է):

– Իսկ չի՞ ստացուի արդեօք այնպէս, որ զօրքերի դուրսբերմանը ոչ մի բայլ չի հետեւի: Չէ՞ որ խաղաղ բեռաշխիքների բացակայութեան դէպքում ռազմական գործողութիւնները նորից ու նորից կարող են բռնկուել:

– Ոչ, ես կարծում եմ, որ բոլորն աստիճանաբար տես են դառնում:

– Ի՞նչ հարկաւոր է անել դրա համար, Հայտար Ալիեւիչ: Դուք հաւանաբար ունէք ձեր մօտեցումները:

– Ես ամէն ինչ կ'անեմ: Բայց հասկանում էք, մի մարդ մօտեցումները բաւարար չեն որպէսզի ամէն ինչ ստացուի. Դուք կարծում էք, թէ մի մարդ կարող է ասել. «Այսպէս պ է լինի» եւ դա կը լինի՞: Այժմ, երբ այդքան բան է կուտակուել 5ից աւելի տարիների ընթացքում... Ես կ'անեմ ինձ կախուած ամէն ինչ:

– Ձեր առաջ այդ գործում խոչընդոտներ կա՞ն:

– Շատ մեծ խոչընդոտներ կան:

– Կարծում էք կը յաղթահարէ՞ք:

– Եթէ ես չեմ յաղթահարի, այլ ճշմարտութիւնը, ազգաբնակչութեան առարկայական զարգացումը կը յաղթահարի. Ես ի՞նչ կարող եմ անել: Ես միայն այդ գործընթացի ակ կողմնակիցներից մէկն եմ: Ոչ աւելին: Բայց մենք այս ամ խելամտօրէն պէտք անենք:

«ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԽՍՀՄ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ

– Պրն. Ալիեւ, ձեր կարծիքով ե՞րբ բաց թողնուած տարածաշրջանում արիւնահեղութիւնը կանգնեցնելու հնարաւորութիւնը:

– Այս ամէնը կանխելու հնարաւորութիւնը կորսուեցաւ 1988 թուականին: Եւ ես վստահօրէն կարող եմ յայտարարել, որ դրա պատասխանատուութիւնն ընկնում է ԽՍՀՄ ժամանակուայ ղեկավարութեան վրայ: Ես դա աւելի եմ այն տարիներին ե՛ւ աւելի ուշ:

– Վերջերս դուք ասացիք, որ դարաբաղեան ողբերգութեան մեղաւորները պէտք է պատասխանատուութիւն ենթարկուեն: Ի՞նչ է դա ենթադրում:

– Ես նկատի չունէի քրէական պատասխանատուութիւնը: Պատմութիւնն ինքը կը դատի:

Չէ՞ որ 200 հազար հայ էր ապրում Պաքուում եւ բոլորը հեռացան: Միթէ՞ դա լաւ է... ինչն էր հարկաւոր ամէն քանդել: Ո՞ւմ էր դա ձեռնտու:

– Իրօք, Հայտար Ալիեւիչ, ո՞ւմ էր դա ձեռնտու:

– Այն մարդկանց, ովքեր կանգնած էին այս գործի ա նուանքներում: Դուք նրանց գիտէք: Ուղղակի հարկ չեմ համ բում թուել:

– Պրն. Ալիեւ, ի՞նչ հարց կայ, որ չտրուեց ձեզ: Ի՞ կ'ուզէիք աւելացնել:

– Հայաստանի «տաք ղլուխները» պէտք է հեռուստ թիւններ անեն այս ողբերգութիւնից, որ հաւասարաչափ բարերում է թէ՛ հայ եւ թէ ատրպէյճանցի ժողովուրդների կատարին: Եւ կարեւոր չէ, որ հայկական կազմաւորումն այժմ գրաւել են Ատրպէյճանի տարածքի որոշակի մասը: Ք որ դրանք ժամանակաւոր բաներ են: Երբեք պատմութիւ թոյլ չի տայ, մարդկութիւնը թոյլ չի տայ նման գաւթակ նութիւն իրականացնել... Ես ցանկանում եմ հայ ժողովր կոչել խելամտութեան...

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆԻ «ՅՈՒՇԱՏԵՏՐ ԺԲ.» ՀԱՏՈՐԸ

Պոլսոյ մէջ լոյս տեսած է «Մարմարա» օրաթ խմբագիր Ռոպէր Հատտէճեանի «Յուշատետր ԺԲ» հատորը, «Մարմարա»ի «Մուրատ օփէք» տպարանի կը բովանդակէ 17 յուլիս 1985էն մինչեւ 14 ապրիլ 198 րիներուն «Մարմարա»ի մէջ հրատարակուած «Յ տետր» յօդուածները, թիւով 67:

Գիրքին մէջ առանձին բաժին մը գրաւած է «Մի Քոչի դէպի Պէյրութ» երկար յօդուածաշարքը, որ կը բ զինակին վերյիշումները 1974ին դէպի Պէյրութ կատ ուղեւորութենէ մը: Պատերազմէն առաջ կատարուա պայցելութեան տպաւորութիւնները «Մարմարա»ի հրատարակուած էին մօտաւորապէս 11 տարի յետոյ արդէն բարուբանդ եղած էր Պէյրութը բաղաքացիական տերազմի հետեւանքով:

Կը Պատահին, Պատահեցան

Բրիտանացի բանտարկեալ մը դէպի դատարան թական այցելութիւն մը կատարեց... շքեղ «Մերսեդէս» լիմուզինով մը, որովհետեւ բանտին փոխադրակառքը մէկը տրամադրելի էր, յայտնեցին Անգլիոյ օրաթերթերը:

Պրիսթըլէն Չելթընհամ լիմուզինով պտոյտին (17 փոխադրածախսը պիտի վճարէ կառավարութիւնը:

Ջեբրայիլից, Աղդամից: Յետոյ հարկաւոր է դուրս բերել բաղարից: Դէ, իսկ ինչ վերաբերում է Լաչինին, այստեղ ի կէ հարցեր կան: Բայց հարկաւոր է թերեւս դուրս բերել Լաչինի միջանցքից եւն. : Ես գտնում եմ, որ ձգձգել չի կ

– Ենթադրենք, որ վաղը դարաբաղեան ուժերը դ են գալիս ձեր նշած տարածքներից, իսկ յետո՞յ:

– Յետոյ մենք ձեր հետ կը տեսնենք (ծիծաղում է):

– Իսկ չի՞ ստացուի արդեօք այնպէս, որ զօրքերի դուրսբերմանը ոչ մի բայլ չի հետեւի: Չէ՞ որ խաղաղ բեռաշխիքների բացակայութեան դէպքում ռազմական գործողութիւնները նորից ու նորից կարող են բռնկուել:

– Ոչ, ես կարծում եմ, որ բոլորն աստիճանաբար տես են դառնում:

– Ի՞նչ հարկաւոր է անել դրա համար, Հայտար Ալիեւիչ: Դուք հաւանաբար ունէք ձեր մօտեցումները:

– Ես ամէն ինչ կ'անեմ: Բայց հասկանում էք, մի մարդ մօտեցումները բաւարար չեն որպէսզի ամէն ինչ ստացուի. Դուք կարծում էք, թէ մի մարդ կարող է ասել. «Այսպէս պ է լինի» եւ դա կը լինի՞: Այժմ, երբ այդքան բան է կուտակուել 5ից աւելի տարիների ընթացքում... Ես կ'անեմ ինձ կախուած ամէն ինչ:

– Ձեր առաջ այդ գործում խոչընդոտներ կա՞ն:

– Շատ մեծ խոչընդոտներ կան:

– Կարծում էք կը յաղթահարէ՞ք:

– Եթէ ես չեմ յաղթահարի, այլ ճշմարտութիւնը, ազգաբնակչութեան առարկայական զարգացումը կը յաղթահարի. Ես ի՞նչ կարող եմ անել: Ես միայն այդ գործընթացի ակ կողմնակիցներից մէկն եմ: Ոչ աւելին: Բայց մենք այս ամ խելամտօրէն պէտք անենք:

«ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԽՍՀՄ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ

– Պրն. Ալիեւ, ձեր կարծիքով ե՞րբ բաց թողնուած տարածաշրջանում արիւնահեղութիւնը կանգնեցնելու հնարաւորութիւնը:

– Այս ամէնը կանխելու հնարաւորութիւնը կորսուեցաւ 1988 թուականին: Եւ ես վստահօրէն կարող եմ յայտարարել, որ դրա պատասխանատուութիւնն ընկնում է ԽՍՀՄ ժամանակուայ ղեկավարութեան վրայ: Ես դա աւելի եմ այն տարիներին ե՛ւ աւելի ուշ:

– Վերջերս դուք ասացիք, որ դարաբաղեան ողբերգութեան մեղաւորները պէտք է պատասխանատուութիւն ենթարկուեն: Ի՞նչ է դա ենթադրում:

– Ես նկատի չունէի քրէական պատասխանատուութիւնը: Պատմութիւնն ինքը կը դատի:

Չէ՞ որ 200 հազար հայ էր ապրում Պաքուում եւ բոլորը հեռացան: Միթէ՞ դա լաւ է... ինչն էր հարկաւոր ամէն քանդել: Ո՞ւմ էր դա ձեռնտու:

– Իրօք, Հայտար Ալիեւիչ, ո՞ւմ էր դա ձեռնտու:

– Այն մարդկանց, ովքեր կանգնած էին այս գործի ա նուանքներում: Դուք նրանց գիտէք: Ուղղակի հարկ չեմ համ բում թուել:

– Պրն. Ալիեւ, ի՞նչ հարց կայ, որ չտրուեց ձեզ: Ի՞ կ'ուզէիք աւելացնել:

– Հայաստանի «տաք ղլուխները» պէտք է հեռուստ թիւններ անեն այս ողբերգութիւնից, որ հաւասարաչափ բարերում է թէ՛ հայ եւ թէ ատրպէյճանցի ժողովուրդների կատարին: Եւ կարեւոր չէ, որ հայկական կազմաւորումն այժմ գրաւել են Ատրպէյճանի տարածքի որոշակի մասը: Ք որ դրանք ժամանակաւոր բաներ են: Երբեք պատմութիւ թոյլ չի տայ, մարդկութիւնը թոյլ չի տայ նման գաւթակ նութիւն իրականացնել... Ես ցանկանում եմ հայ ժողովր կոչել խելամտութեան...